Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք. Երևան 01 մարտի 2019թ.

Ներկա էին ՝գիտխորհրդի 24 անդամներից 17–ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա.Դադայան
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը» վերնագրով ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:
   Զեկուցող՝ Ա. Սաղյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի արդյունքների վերաբերյալ:
   Զեկուցողներ՝
   - **Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյան**
   - **Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ բ.գ.թ. Հ. Սիմոնյան**
   - **Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան**
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Եփրեմի Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը» վերնագրով ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով նշեց, որ Ա.Ե. Սահակյանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման: Նա շեշտեց, որ այն կարևոր մասնագիտական ձեռնարկ է, որը կլրացնի հայերեն լեզվով նմանատիպ աշխատությունների բացը:

Արտաքին գրախոսը (ԵՊԲՀ Դեղագործության կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Կ.Մ. Սահակյան) ևս կարևորել է ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը «Դեղագիտության կառավարում և էկոնոմիկա» առարկայի դասավանդման համար և երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (300 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

2. **Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի արդյունքների վերաբերյալ:**

Լսեցին՝

- Ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանին, ով ներկայացրեց ամբիոնում դասավանդվող առարկաների քննությունների արդյունքերը: Նա մասնավորապես նշեց, որ ուսանողներն այս քննաշրջանում հիմնականում հաջողությամբ հանձնել են բոլոր առարկաների քննությունները: Միայն «Ապացուցողական բժշկության հիմունքներ» առարկայից 17 ուսանող քննությունը հանձնել են 1-ին լուծարքի ժամանակ:
- Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. Հ. Սիմոնյանին, ով ներկայացրեց ամբիոնում քննաշրջանի արդյունքները: Նա նշեց, որ ամբիոնում դասավանդվում են 7 առարկաներ, որոնցից մասնավորապես, 17 ուսանող քննությունը չեն հանձնել ֆարմքիմիա-2, 30-ը՝ կենսատեխնոլոգիա և 17-ը՝ կենսօրգանական քիմիա առարկաներից: 1-ին լուծարքից հետո բոլոր 17 ուսանողները հանձնել են քննությունը ֆարմքիմիա առարկայից, իսկ երկրորդ լուծարքի ժամանակ 5 հոգի հանձնել են կենսօրգանական քիմիայի և 11 հոգի՝ կենսատեխնոլոգիայի քննությունը:

Երրորդ լուծարքում 15 հոգի քննություն կհանձնեն միայն կենսատեխնոլոգիա առարկայից:

- Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ ամբիոնում դասավանդվող առարկաներից միայն դեղագիտության կառավարում և էկոնոմիկա առարկայից քննությունը չեն հանձնել 3-րդ կուրսի 65 ուսանողներից 13 հոգի, որոնցից 11-ը հետագայում այն հանձնել են առաջին լուծարքի ժամանակ, իսկ 2-ը՝ երկրորդ լուծարքի ժամանակ: Մագիստրատուրայում դասավանդվող կոսմետիկ պատրաստուկների տեխնոլոգիա առարկայից 51 ուսանողներից 13-ը քննությունը հանձնել են 1-ին լուծարքի ժամանակ, 2-ը՝ երկրորդ լուծարքի ժամանակ: Մնացած առարկաների քննությունները ուսանողները հանձնել են հաջողությամբ:

Որոշեցին՝ Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ. Ա.Դադայան